ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2019թ. N ----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը, հիմք ընդունելով «Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպության նախագահի գրությունը, ղեկավարվելով ‹‹Գույքահարկի մասին›› օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ-00010672/ սեփականության իրավունքով պատկանող, Կենտրոն վարչական շրջանի Կողբացի 69 հասցեում գտնվող շինության նկատմամբ սահմանել գույքահարկի գծով արտոնություն՝ ազատելով 3745271 /երեք միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար երկու հարյուր յոթանասունմեկ/ դրամի չափով գույքահարկի վճարումից /ապառք՝ 2493884 դրամ, տույժ՝ 1251387 դրամ/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

§ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՒԼԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ¦ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ «ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի խուլերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, Կենտրոն վարչական շրջանի Կողբացի 69 հասցեում գտնվող շինության 2018 թվականի գույքահարկի գումարը 21.01.2019 թվականի դրությամբ կազմում է 3745271 /երեք միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար երկու հարյուր յոթանասունմեկ/ դրամ, որի համար «Հայաստանի խուլերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպության նախագահը 31.10.2018թ. հ. 95 գրությամբ դիմել է օրենքով սահմանված կարգով գույքահարկի գծով արտոնություն ստանալու խնդրանքով՝ պատճառաբանելով, որ 2017 թվականից որոշ խնդիրների հետ կապված խաթարվել են կազմակերպության բնականոն աշխատանքները: Անելանելի վիճակում հայտնվելով, վարձակալ կազմակերպությունների մեծ մասը լուծելով պայմանագրերը, հեռացել են և միավորումն այլևս զրկվել է հարկային վճարումները կատարելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպությանը «Գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը՝ 3745271 /երեք միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար երկու հարյուր յոթանասունմեկ/ դրամի չափով /ապառք՝ 2493884 դրամ, տույժ՝ 1251387 դրամ/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

§ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՒԼԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ¦ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ «ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի խուլերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, Կենտրոն վարչական շրջանի Կողբացի 69 հասցեում գտնվող շինության 2018 թվականի գույքահարկի գումարը 21.01.2019 թվականի դրությամբ կազմում է 3745271 /երեք միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար երկու հարյուր յոթանասունմեկ/, որի համար «Հայաստանի խուլերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպության նախագահը 31.10.2018թ. հ. 95 գրությամբ դիմել է օրենքով սահմանված կարգով գույքահարկի գծով արտոնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով «Հայաստանի խուլերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպության նախագահի գրությունը՝ նպատակահարմար եմ գտնում տրամադրել 3745271 /երեք միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար երկու հարյուր յոթանասունմեկ/ դրամի չափով գույքահարկի գծով արտոնություն /ապառք՝ 2493884 դրամ, տույժ՝ 1251387 դրամ/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 1

§ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՒԼԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ¦ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ «ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 2

§ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՒԼԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ¦ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ «ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ